ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 հունիսի 2023 թվականի N 874-Ն

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 20-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել ոստիկանության ծառայողների, բացառությամբ ոստիկանության պետի տեղակալների, ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարի չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) ոստիկանության պետի տեղակալներն ատեստավորման արդյունքներով ստանում են հավելավճար՝ «Գերազանց» գնահատականի դեպքում՝ 200.000 դրամի չափով, «Լավ» գնահատականի դեպքում՝ նշված գումարի 75 տոկոսի, իսկ «Բավարար» գնահատականի դեպքում՝ նշված գումարի 50 տոկոսի չափով.

2) սույն որոշմամբ սահմանված հավելավճարները՝ ըստ ոստիկանության գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոն զբաղեցնող ծառայողների, ինչպես նաև ոստիկանության պետի տեղակալների ատեստավորման արդյունքների,

սահմանվում են յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը հատկացված աշխատավարձի ֆոնդի սահմաններում.

3) ոստիկանության ծառայողների ատեստավորման արդյունքներով հավելավճարը վճարվում է ատեստավորման օրվան հաջորդող ամսվա 1-ից.

4) հավելավճարների վճարումն իրականացվում է ոստիկանության ծառայողների դրամական ապահովության վճարման հետ միաժամանակ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

01.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ